## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ս. Աթոռոյս միաբան Տէր. Յովհաննէս վարդապետ Նաղեան Աղթամարցի Կամմակոտի տեսչութեան պաշտօնիւ այս տեղէն մեկնելով և Պերութ հասնելով նաւակ կը նստի քանի մի անձանց հետ ելանել 'ի ցամաք Ծովը սաստիկ խռոված և ալեկոծուած լինելով՝ նաւակը կ'ընկղմի. Չորս անձինք խայտառ ծովամոյն կը լինին, իսկ Յովհաննէս վարդապետն լողալու վարժ լինելով իւր անձը կ'ազատէ և ցամաքը կ'ելնէ. Իւր տագնապեալ վիճակին մէջ՝ կ'աղաչէ որ զինքը Հայոց վանքը տանեն. Հռովմէական հայ մի կը ներկայանայ Հռովմէականաց վանքը տանելու համար, բայց երբ կը ստուգէ որ վարդապետը Հռովմէական չէ, կը թողու և կը հեռանայ: Ա՜հ կոյր մոլեռանդութիւն, ինչպէ՜ս դիւրաւ կը շիջուցանես քրիստոնէական մարդասիրութեան և հայկական եղբայրսիրութե՟ն քաղցրիկ և բնական զգացմունքները. Մինչ այս մինչ այն, լուր կ'առնու Պերութի մաքսատան սեղանաւոր Պօլսեցի Մեծ. Յակոբ Աղան և իսկոյն ծառաներով հանդերձ կուգայ և վարդապետը իւր տունը կը տանէ. Այս Ազնիւ Հայազգին վարդապետի հագուստները կը փոխէ և ամեն խնամք և հոգացողութիւն գործ դնելով ամեն վնասակար հետեւանաց առաջն կ'առնու: Նոյն միջոցին կ'աճապարէ նմանապէս Պերութի վանաց տեսուչ Տէր. Սողոմոն վարդապետն Կեօմիւշճեան և իւր միաբանակից եղբայրն կազդուրեալ վիճակի մէջ գտնելով և մեծ գոհունակութիւն մատուցանելով Մեծ. Յակոբ Աղային՝ կ'առնու Հայոց վանքը կը տանի:

## ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

1. Մինչեւ ներկայ թուականը խիստ մեծ դժուարութեանց կը հանդիպէինք Արծիւը կանոնաւորապէս մեր Գաւառական Մեծ. Բաժանորդներուն հասցնելու համար. վասն զի ցամաքային փոստաները կանոնաւորուած չէին և Արծուի ամսատետրերը սովորաբար ճանապարհորդաց ձեռամբ կը ղրկուէին. Այս տարի Յոպպէի ցամաքային փոստայի տեսուչը, Ամեն. Արքազան Պատրիարքի խնդրանօք, յանձնառու եղաւ ընդունիլ Արծուի ամսատետրերը և ապահովապէս գաւառական բաժանորդներուն հասուցանել. Ուստի ներկայիւս կը ծանուցանի մեր Գաւառական Բաժանորդաց, որ այսուհետեւ Արծիւը ցամաքային փոստայիւ իրենց ձեռքը պիտի հասնի. Հետեւապէս, եթէ բաժանորդ գրուելու փափագողներ կան, թող բարեհաճին իրենց անունը, մականունը և քաղաքի անունը գրով հաղորդել Արծուի խմբագրութեանը, որ 'ի վանս Ս. Յակոբեանց Երուսաղէմ: Արծուի տարեկան բաժանորդագրութեան գինն է, ըստ առաջնոյն, երկու արծաթ Մեճիտիէ հանդերձ ճանապարհի ծախքով, կանխիկ վճարելի.

2. Ս. Աթոռս փափաքելով ընթերցասիրութիւնը և ուսումնասիրութիւնը աւելի դիւրամատչելի ընել թէ՛ ընդհանրապէս ազգայնոց մէջ և թէ մասնաւորապէս դպրոցաց՝ իւր տպարանէն ելած գրեանց գիները ըղձալի կերպով իջեցուց, աւելի բարոյական շահը իրեն նպատակ բռնելով քան թէ նիւթականը: Ցանկալով հաղորդել մեր ազգայնոց Ս. Աթոռոյս այս նոր և շահաւէտ տնօրէնութիւնը՝ կը հրատարակենք աստ Գրոց ցանկը, իւրաքանչիւրն իւր արժողութեամբ հանդերձ, ինչպէս որ պիտի վաճառուին 'ի Ս. Երուսաղէմ և 'ի Պօլիս Ս. Աթոռոյս գրատանցմէջ: